

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՄԵԾ ՎԱՆՔ

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ԽԱԶԵՐԻ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵԿ ՎԻՄԱԳՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

Բ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГАГИК Г. САРГСЯН

МЕЦ ВАНК
ЭПИГРАФИКА И СЕМАНТИКА КРЕСТОВ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

GAGIK G. SARGSYAN

METS VANK
THE EPIGRAPHY AND SEMANTICS OF CROSSES

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН – 2024

PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN – 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵԾ ՎԱՆՔ

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ԵՐԵՎԱՆ
ՀԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2024

Գիրքը հրապարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհուրդը

ՀՏԴ 930.2
ԳՄԴ 60.2
Ս 259

Խմբագիրներ՝ Հուսիկ Մելքոնյան, պատմ. գիտ. թեկնածու
Արսեն Հարությունյան, պատմ. գիտ. թեկնածու

Редакторы: Усик Мелконян, кандидат ист. наук
Арсен Арутюнян, кандидат ист. наук

Editors: Husik Melkonyan, PhD in History
Arsen Harutyunyan, PhD in History

Սարգսյան Գագիկ Գ.,

Ս259 Մեծ վանք. վիմագրությունը և խաչերի իմաստաբանությունը. – Եր.: ՀԱԻ
հրատ., 2024. – 64 էջ:

Саргсян Гагик Г., Мец ванк. эпиграфика и семантика крестов, Ереван, Изд.
института археологии и этнографии НАН РА, 2024, 64 страницы.

Sargsyan Gagik G., Mets Vank. Epigraphy and the Semantics of Crosses,
Yerevan, Publishing House of the Institute of Archaeology and Ethnography,
2024, 64 pages.

ՀՏԴ 930.2
ԳՄԴ 60.2

ISBN 978-9939-886-62-6

© Սարգսյան Գ., 2024

ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

2021 թ. բաժինը սկզբնավորեց վիմագրագիտական մատենաշար՝ «Մեկ վիմագրի հանրագիտակ», որի գրքույկ-պրակները պետք է նվիրված լինեն մեկ արձանագրական միավորի համապարփակ ուսումնասիրությանը¹: Հետագա գործընթացները ցույց տվեցին, որ ուսումնասիրության համար մեկ արձանագրություն ընտրելը, եթե բառիս նեղ իմաստով համապատասխանում է պրակի ստեղծման պահանջին, ապա բովանդակային առումով որոշակիորեն նեղացնում է բնագավառի առավել բազմակողմանի ու խորագնին քննության հնարավորությունները: Ըստ այդմ, վիմագրության բաժինը նպատակահարմար գտավ «հավատարիմ» մնալով «մեկ»-ի գաղափարին, ուսումնասիրությունները «կառուցել» վիմագրագիտական մեկ երևույթի, խնդրի շուրջ՝ աղբյուրագիտական հենք ընդունելով ինչպես մեկ, այնպես էլ նույնաբովանդակ անսահմանափակ քանակությամբ վիմագրեր: Գրեթե այս մոտեցմամբ է շարադրված բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Գ.Գ.Սարգսյանի «Մեծ վանք» վիմագրությունը և խաչերի իմաստաբանությունը՝ ուսումնասիրությունը, որը վիմագրության բաժինը նպատակահարմար գտավ երաշխավորել որպես նշյալ մատենաշարի Բ պրակ:

¹ Նույն թվականին լույս տեսավ առաջին պրակը. Գագիկ Գ.Սարգսյան, «Նորահայտ վիմագիր Արտավազավանքից» վերտառությամբ:

ՄՈՒՏՔ

Պատմաճարտարապետական կառույցների որմերին, խաչքարերին ու տապանաքարերին փորագրված արձանագրություններն այդ վիմագրակիր հուշարձանների կառուցման ու կերտման հիմնական ու արժանահավատ սկզբնաղբյուրներն են, երբեմն, անկախ բովանդակությունից ու արտահայտչաձևերից, բնագրի ծավալից: Անգնահատելի պատմաաղբյուրագիտական արժեք ու նշանակություն կարող է ունենալ անգամ մեկ տառը, եթե այն քարգործ վարպետի անվան առաջին տառն է կամ խորհրդանշանային որևէ գծապատկեր, որն իր համար ընտրել է վարպետը, փորձելով «ծածկագրել» իր անձը, այսօր անվանվում է «վարպետի նշան»: Անշուշտ, բացառիկ աղբյուրագիտական արժեք կարող է ունենալ մեկ կամ մի քանի տասնյակ տողերից բաղկացած վկայագրերը, որոնք բովանդակում են վստահելի տվյալներ տվյալ հուշարձանի շինարարության կամ նորոգման, կատարված նվիրատվությունների և դրանք իրականացրած անձանց մասին: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատանքը վերաբերում է նշյալ գիտակարգում ոչ սակավ հանդիպող մի երևույթի քննությանը, ինչը, կարծում ենք, վիմագրագիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Քննության առարկան առանձին հոգևոր կառույցների որմերին փորագրված խիստ կարճառոտ, երբեմն մեկ բառից բաղկացած (անձնանուն), մեկ կամ ավելի խաչապատկերներով ուղեկցվող հիշատակագրություններն են: Այս համատեքստում փորձում ենք երևույթին առնչվող մեկ այլ խնդրի պարզաբանման եզրեր գտնել, երբ ամբողջ պատեր հարդարված

են լինում տարբեր չափերի, պարզ կամ ոճավորված խաչաքանդակներով, որտեղ բացակայում է վիմագրական նյութը: Քանի որ քննարկվող նյութի խնդրո առարկան մեկ եկեղեցական կառույցի վիմագրերն են, որոնք առաջին անգամ են հասու դառնում ընթերցողին՝ անհրաժեշտ գտանք հավուր պատշաճի ներկայացնել հուշարձանի բոլոր արձանագրությունները:

Վերը շարադրվածից բխում է, թե ուսումնասիրությունը խարսխվում է քննվելիք երկու «առարկաների» վրա՝ «խոսող» և «անխոս» խաչապատկերներ: Սակայն, մեր համոզմամբ, երկուսն էլ առնչվում են նույն իրողությանը, դա հոգևոր հաստատության նկատմամբ կամ համար կատարված եկեղեցանպաստ որևէ գործարքին (նվիրատվություն, շինարարություն, կամ նորոգչություն) «ի պատասխան» միաբանության վերաբերմունքի փաստագրում, արտահայտված գրով կամ անգիր:

«ՄԵԾ ՎԱՆՔ» ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Վայոց ձորի մարզում կան տարածքներ, որոնցում պահպանված վիմական արձանագրությունները տարբեր, մեզ անհայտ պատճառներով տեղ չեն գտել «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի համապատասխան պրակում: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի դաշտային-հավաքչական առաջնահերթ աշխատանքների կարևոր բաղկացուցիչներից են չուսումնասիրված շրջանների հուշարձաններից վիմագիր նյութի հավաքումը և լրացուցիչ պրակներով հրատարակումը: Այդ նպատակով 2009թ. հունիսին հնագետ, միջնադարագետ Հուսիկ Մելքոնյանի հետ այցելեցինք Վայոց ձորի հարավային տարածքները և երկօրյա դաշտային հետազոտությունների արդյունքում հաջողվեց հավաքել ու վերծանել տարատեսակ հուշարձանների որմերին զետեղված հարյուրից ավելի վիմագիր: Հիշյալ հավաքչական աշխատանքների արդյունք է նաև ընթերցողի ուշադրությանը ներկայացվող մի կիսավեր եկեղեցու որմերին և ընկած շինաքարերին փորագրված վիմական արձանագրությունների «փունջ», որը, մեր կարծիքով, որպես վիմագրագիտական երևույթ, արժանի է առանձին քննության:

Պատմամշակութային անշարժ հուշարձանների պետական ցուցակներում եկեղեցին անվանված է «Մեծ վանք»: Այն գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հարավակողմում, Հորադիս գյուղատեղից մոտ 1 կմ հարավ-արևելք, «Սպիտակ աղբյուր» («Վանքի ձոր») կոչվող ձորի բարձրադիր լանջին (նկ. 1, 2):

Կառույցի որմերը շարված են մշակված ու կիսամշակ տեղական դեղնավուն քարից (ֆելզիտ): Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ միանավ երկարավուն սրահով, ուղղանկյուն խորանով եկեղեցի է: Հյուսիսային և հարավային պատերին, ներքուստ, նա-



Նկ. 1. «Մեծ վանք» եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից



Նկ. 2. «Մեծ վանք» եկեղեցու ներքին տեսքը



Նկ. 3. «Մեծ վանք»-ի մուտքի կամարի վկայագիրը

վի կամարները կրող երկուական ուղղանկյուն որմնամույթեր են, իսկ հյուսիսային որմին առկա են սրբատաշ քարաշարով, տարբեր չափերի երեք պատրիան-խորշեր: Արևելյան պատին բացակայում են գլխավոր խորանների (կիսակլոր կամ ուղղանկյուն) բնորոշ կառուցվածքային շարվածքները, կենտրոնում ուղղանկյուն պատուհանն է: Մուտքն արևմտյան կողմից է: Այն արտաքուստ աչքի է ընկնում ճարտարապետաշինարարական, քանդակագործական ու հատկապես վիմագրական հարդարանքով:

Հուշարձանի որմերին և ընկած շինաքարերին առկա են 38 արձանագրություն, որոնցից մեկը շինարարական է (N°1), մեկը խաչքարի կանգնեցումը փաստող (N°8), ևս մեկը, հավանաբար, փորագրիչ վարպետի ինքնագիր (N°31), մնացած 35-ը՝ նույնաբովանդակ հիշատակագրություն: Վկայագրերից թվագրված են երեքը (N°N° 1, 31, 38) և կրում են ուշ միջնադարի հայոց դժբախտալից թվականներից՝ 1679 թ., մեծ երկրաշարժը: Այստեղ նկատի չունենք թվականի անմիջական առնչությունն աղետի հետ:

Արձանագրություններից «գլխավորը» եկեղեցու արևմտյան

մուտքի կամարակապ քվիլին փորագրված միատող շինարարական բնագիրն է (նկ. 3):

Վկայագիրը երկու իրողություն է բացահայտում՝ 1679թ. կառուցվել է (ՇԻՆԵՑՕ՝ թերևս ՇԻՆԵՑԱԻ իմաստով) սույն եկեղեցին, ինչը վիմագրով վավերացրել է տեր Կիրակոսը:

«Մեծ վանք»-ին նվիրված համառոտ անդրադարձում Ա. Ասատրյանը և գրչընկեր Ա. Հովհաննիսյանը Վայոց ձորի նաև հուշարձանակործան երկրաշարժերին նվիրված ուշագրավ ուսումնասիրության մեջ, ենթադրում են. «...որ եկեղեցին կառուցվել է XVII դարի կեսերին և 1679թ. միայն վերանորոգվել է՝ այդ թվականին երկրաշարժից վնասված լինելու պատճառով»²: Հեղինակների այս կարծիքը, թերևս, այդքան էլ համոզիչ չէ: Նախ. որքանով է փաստարկված այն համոզումը, որ 1679թ. երկրաշարժն ավերածություններ է առաջացրել Վայոց ձորում, մասնավորապես՝ նշյալ տարածաշրջանում: Հայտնի չէ թե 17-րդ դարի կեսերի որ երկրաշարժից է ավերվել կամ վնասվել «մեր» եկեղեցին: Հեղինակներն իրենց աշխատության մեջ ներկայացնում են այն երկրաշարժերը, որոնք կարող էին վնասել կամ ավերել վայոցձորյան կառույցները. «Անշուշտ Վայոց ձորում իրենց ազդեցությունն են ունեցել Տաթևի 895թ., ինչպես նաև 915, 1139, 1143, 1308, 1407, 1622 (Սիսիանում), 1658 (Հալիձորում), 1668, 1881, 1931, 1968 թթ. երկրաշարժերը...»³, հաջորդիվ. «Հետագայում Վայոց ձորի վրա ազդել են Վանի 1646 և 1647 թթ. երկրաշարժերը»⁴: Նշյալ և հատկապես առավել ուժգին 1679թ. երկրաշարժերի ազդեցության մասին վայոցձորյան խնդրո առարկա տարածքներում ըստ գրավոր սկզբնաղբյուրների՝ երկրաշարժային ավերակումներ վկայված չեն: Կարծում ենք, որ անհրաժեշտ է նկատառել նաև հիշյալ ցնցումների էպիկենտրոնից Վայոց ձորի «հորադիսամերձ» տարածքների հեռավորությունը:

² Ասատրյան, Հովհաննիսյան 2022, 303:

³ Ասատրյան, Հովհաննիսյան 2022, 26:


⁴ Ասատրյան, Հովհաննիսյան 2022, 34:

Ըստ այսմ, հեղինակների «առաջարկը» «շինել» դերբայը հասկանալ «վերանորոգել» իմաստով (չնայած այդպիսի օրինակներ հայտնի են), գտնում ենք ոչ տեղին:

Այնուհետ, զարգացնելով թվականը որպես երկրաշարժի տարի դիտարկելու, ըստ այդմ էլ եկեղեցին այդ թվականին կառուցելու գաղափարը, գտնում են, որ հուշարձանի այդ թվականով թվագրված երկու հիշատակագրությունները «անշուշտ, կապված են հունիսի 4-ի երկրաշարժի հետ»⁵: Համահայաստանյան առումով այս թվականն իրոք բնորոշվում է որպես այդ աղետաբեր երկրաշարժի տարի, ինչպես մենք վերևում նշեցինք, սակայն վայոցձորյան իրողությունը, կարծում ենք այլ է՝ ուղղակի առկա է թվականների պարզ համընկնում: Եթե դիտարկենք, թեկուզ, մեր հուշարձանի շինարարական վկայագիրը. ապա, գրեթե հավատացած ենք, որ այդ թվականի հունիսի 4-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանք ավերակները չէին կարող տարվա մնացած ամիսներին վերականգնվել: Ասվածին հարկ է հավելել ևս մի հանգամանք. երկրաշարժերին առնչվող վիմագրերում, գրեթե միշտ փաստված է այդ աղետը: Հետաքրքիր է, որ Վայոց ձորի հուշարձաններից հավաքված և հրապարակված վկայագրերում (թվականի առկայությամբ) մեզ չհաջողվեց գտնել այդ թվականով այլ վիմագիր: Այս միակ շինարարական վկայագրում հիշվում է փորագրող վարպետ Վարդան քահանայի որդի Կիրակոս քահանան: Նա գործունեություն է ծավալել նաև շրջակա տարածքներում՝ հանդես գալով նաև որպես քանդակագործ: Մարզի Մարտիրոս գյուղի արևմտյան եզրի գերեզմանոցում պահպանվել է օրորոցաձև տապանաքար, որի հարավային նիստին փորագրված տապանագիրն ավարտվում է հետևյալ բառակապակցությամբ. ...ԹՎԻՆ՝ ՌՃԺ ՄԷԿԻՆ (1662) ՏՐ ԿԻՐԼԱԿԼՈՅ ԿԼԱԶՄԼՈՂ ՍՈՐԻՆ⁶: (նկ. 4)

⁵ Ասատրյան, Հովհաննիսյան 2022, 303:

⁶ Բաբխուդարյան 1967, 190, արձ. 591 (լուսանկարը՝ «Դիվան»-ից): Թվականի ՄԷԿԻՆ բառում որոշակի է ՄԵ կցագիրը, ինչը նախորդ հրապարակման մեջ, վրիպմամբ, կարդացվել է ՄԷ: Մեր գործընկեր Ա. Հա-



Նկ. 4. Մարտիրոսի գերեզմանապան փապանագիրը



Նկ. 5. Օղբին գյուղատեղի եկեղեցու բարավորը

Ժամանակաշրջանի, աշխարհագրական մերձության ու անձնանվան արտահայտչաձևը հիմք են տալիս նույնացման եզրեր տեսնել տապանաքար «կազմող» տեր Կիրակոսի և մեր վկայագիրը փորագրող համանուն անձի միջև: Դատելով ջանասեր վարպետի քարակերտ ստեղծագործություններից՝ նա, մերօրյա նշանակությամբ, ավելի շատ եղել է ճարտարապետաքանդակագործական «մանր ձևերի» վարպետ և շնորհաշատ վիմագրիչ: Ասվածի ուշագրավ վկայություններից են տեր Կիրակոսի մյուս ստեղծագործությունները, ի դեմս մերձակա Օղբին գյուղատեղի կիսաժայռափոր եկեղեցու հարավային մուտքի բարավորի արձա-

րությունյանը ենթադրում է, որ Երևանի Նորքի կամրջի վկայագրում (1664 թ.) հիշված Կիրակոսը, որը, թերևս, կապ ունի կամրջի շինարարության հետ, կարող է լինել վայոցձորյան նույնանուն վարպետը:

նագրությանը՝...ԵՍ ՏՐ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ ՏՐ ԿԻՐԱԿՈՍ ՇԻՆԵՑԻ ԽԱՉՍ...⁷: (նկ.5)

Կարծում ենք, որ ՇԻՆԵՑԻ ԽԱՉՍ բառակապակցությունը վերաբերում է բարավորի կենտրոնի խաչապատկերին՝ նկատառելով նաև արձանագրված ամբողջ քարը:

Գրեթե կասկած չի հարուցում, որ մեր «հերոսն» է կողակցի հետ հիշատակված նույն եկեղեցու հյուսիսային ավանդատան կիսակլոր բարավորին փորագրված կենտրոնական խաչապատկերին կից արձանագրության մեջ. ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է / ՏՐ ԿԻՐԱԿՈՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ...ԱԽՈՒՆ⁸: (նկ.6)



Նկ. 6. Օղբին գյուղաբերդի եկեղեցու հյուսիսային ավանդատան բարավորը

Հիմնականում հոր անվանակցությամբ հիշված վկայությունները թույլ են տալիս կարծելու, որ տեր Կիրակոսի հայր տեր Վարդանը եղել է արժանավոր ու հայտնի անձնավորություն, թերևս, նույնպես քարագործ, և որդին նրա հետ հիշատակվելը պատիվ ու անհրաժեշտ է համարել:

Մնացած 36 արձանագրությունները գրեթե միաբովանդակ, կարճառոտ ու բովանդակությամբ պարզունակ հիշատակագրեր են և առաջին հայացքից «չեն մատնում» եկեղեցու որմերին զետեղվելու պատճառահետևանքային առնչությունը:

⁷ Սարգսյան, Մելքոնյան 2012, 110:

⁸ Սարգսյան, Մելքոնյան 2012, 112: Լուսանկարը՝ վերևում, հեղինակինն է:

Այսօրինակ հիշատակագրությունները, դրանց «ուղեկից» տարաչափ ու տարաոճ խաչապատկերները, այդպիսիք կրող որմնագույց խաչքարերը, չնայած որոշակի տարածվածության՝ համակարգված քննության չեն «արժանացել»⁹: Նշվել են մի շարք իրողություններ, որոնցով պայմանավորվել են դրանց առկայությունը, բովանդակությունն ու նշանակությունը: Այս համատեքստում առավել տարածված է այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ հոգևոր հաստատությանը որևէ իր ու այլ ինչք նվիրելու, շինարարական կամ նորոգչական աշխատանքներին մասնակցելու, այդ առիթներով մեկենասության դիմաց այդ անձանց կամ խմբին արտոնվում էր վանական կառույցի որմին հիշատակագրությամբ ուղեկցված խաչ փորագծելուն կամ իրենց անվամբ որմնագույց խաչքար տեղադրելու:

Կարծում ենք, որ նշյալ երևույթին բովանդակությամբ ու նշանակությամբ «համահունչ» են որոշակի տարածում ստացած այն դեպքերը, երբ կառույցների, հիմնականում արևմտահայաց կամ հարավահայաց պատերը, գրեթե ամբողջությամբ հարդարվել են լոկ տարաչափ ու նույնաձև խաչերով: Այդօրինակ «խաչադաշտերի» առկայությունը, առաջին հայացքից դժվար է մեկնել իմաստաբանական մոտեցմամբ: Թվում է թե այն կարող էր դիտարկվել նույնիսկ «գեղագիտական» պատկերացումների հոլովոյթում: Սակայն այդ խաչապատ որմերի մանրագնությունը հարուցում է մի շարք հարցադրումներ, որոնց կանդրադառնանք իր տեղում: Այժմ հարկ է ներկայացնել «Մեծ վանք»-ի վիմագրագիտական պատկերը:

⁹ Որմնագույց խաչքարերի համալիր քննությանը ուշագրավ հողված է նվիրել վիմագրագետ Ա. Հարությունյանը (**Հարությունյան** 2017, 118-132):


«ՄԵԾ ՎԱՆՔ» ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



1. Եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի կիսաբուլոր եզրագոտուն, 1 սող.

**ՇԻՆԵՅՑՕ ԵԿԵՂԵՑԻՍ ԹՎԻՆ ՌՃԻ Ը (1679) + ԵՄ՝
ՏՐ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ ՏՐ ԿԻՐԱԿՈՍ, ԳՐԵՅԻ¹⁰:**


2. Եկեղեցու արևմտյան մուտքի ծախ եզրագոտուն, վերից առաջինը, 4 սող.



**ԽԱՂ ՉՍ ԻՇԼ ԱՏԱՂ Կ Է ՄԱՀ-
ԴԱՍԻ ՄԱՆՈՒԿԻՆ
ԵՒ ԿՈՂ ՂԱԿՂ ՅԻՆ՝ ԿՈՒ-
ԼՈՒՄԻՆ:**

¹⁰ Սարգսյան, Մելքոնյան 2012, 111:


3. Նախորդի ստորև, 4 տող.



ԽԱՂ ՉՍ ԻՇԱՏԱՂ
Կ Է ԹՈՒՄԻՆՆ ,
ՈՐ Է ՈՐԴԻ ՄԱ-
ՆՈՒԿԻՆ:

Ծանոթ. Չենք բացառում, որ Թուման նախորդ վիմագրում հիշված ամուսինների որդին է:


4. Նախորդի ստորև. 8 տող.



ԽԱՂ ՉՍ ԻՇԱՏԱՂ Կ Է
ՆԱԽԻ, ՈՐԴԻ ԿԻ-
ՐԱԿՈՍ,
ԿՈՂԱԿՑԻՆ ՊԷԿՈՒՆ,
ԵՂԲՕՐՆ՝ Օ(ԱԻ)ԵՏԻՍԻՆ
ԵԻ ԿՈՂԱԿ
ՑԻՆ ԵՂԻ-
ՍԱԲԵԹ
ԻՆ:


Ծանոթ. Թեական են երկրորդ տողի առաջին բառի և հինգերորդ տողի վերջանությունները: Պէկ կամ Պէկի, նաև Բէկի, հիմնականում իզական անձնանունը վկայված է 15-րդ դարի կեսերից:

5. Եկեղեցու արևմտյան մուտքի աջ եզրագոտուն, վերից առաջինը, 5 տող.



ԽԱՂ ՉՍ ԻՇԱՏԱՂ Կ Է
ՊԱԼԻ, ՈՐԴԻ
ՎԱՐԴԱՆԻՆ ԵԻ
ԿՈՂԱԿՑԻՆ ԿՈՒ-
ԼՈՒՄԻՆ:

6. Նախորդի ստորև, 10 տող.



ԽԱ ՉՍ ԻՇԱՏԱ Կ Է
ՏՐ ԱԲՈՒԱ Հ
ԱՄԻՆ ԿՈ
ՂԱԿ
ՑԻՆ՝
ԱՄԷԼԻՔԻՆ
ՈՐԴԻ ՈՍԿԱՆԻՆ
ԿՈՂԱԿՑԻՆ՝
ՄԱՐԻԱՆԻՆ, ՈՐԴԻ
ՅԱՐՈՒԹԻՆ:


Ծանոթ. Ուշագրավ է մեզ առաջին անգամ հանդիպող ԱՄԷԼԻՔ անձնանունը (կարծում ենք՝ իգական):

7. Եկեղեցու արևմտյան մուտքի ձախ կողանիստին, 3 տող.




ԽԱ ՉՍ ԻՇԱՏԱ Կ Է
...ԱՂԵՆ ՄՕ-
ԻՐՆ ՄԱՐԻԱՆԻՆ:

8. ԽԱԶՔԱՐ, հորիզոնական դրված եկեղեցու մուտքի վերելում, հիմնախաչի ստորև, 4 տող.



ԿԱՆԿԱՆԵՑԱԻ ԽԱ ՉՍ
ՀՈԳՈՅ ԿՈՍՏԱՆԴ
ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ,
ՅԻՇԷՔ Ի ՔՍ:

9. Եկեղեցու արևմտյան մուտքի ձախ կողանիստին, 3 տող.




Խ[Ա] ՉՍ ԻՇ[ԱՏԱ] Կ Է
ՅԱԿՈԲԻՆ՝ ՈՐԴԻ [Ս]
ԱՀԱԿԻՆ:

10. Եկեղեցու արևմտյան մուտքի ձախ կողանիստին, նախորդի ստորև, 3 տող.

Խ[Ա] ՉՍ ԻՇ[ԱՏԱ] Կ Է [ՍԱՐ]
ՔՍԻՆ, ՀՕ[Ր]Ն՝
ՈՀԱՆԻՆ:

Ծանոթ. Գրչագիրը վերևում:


11. Եկեղեցու արևմտյան պատին, հարավային անկյունաքարին, 3 տող.



Խ[Ա] ՉՍ ԻՇԱ[ՏԱ]Կ Է ՄԿԸՐՏԻ-
ՉԻՆ՝ ՈՐԴՈ ԱՌԱՔԵԼԻՆ
ԵՒ ԵՂԻԿԻՆ:

Ծանոթ. Մկրտիչ անվան մեջ գրիչը, թերևս, վրիպելով՝ Կ տառից հետո փորագրել է Ը, որը կարելի է դիտարկել նաև Ը, Ր կցագիր: Մենք առավել հակված ենք կարծելու, որ Ր տառի ստորև հորիզոնական ստեղծող սխալմամբ է փորագրվել:

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՅԹԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ



12. Ձախակողմյան փոքր պատրիանի հարավահայաց նիստին, 3 տող.



ԽԱ ՉՍ
ՄԻՐԶ
ԱԽԱՆԻ [Ն] :

13. Նախորդի ստորև, 3 տող.



ԽԱ ՉՍ ԻԾԱՏԱ
Կ ՄԱՐԱՆ
ԻՆ Է:

14. Նույն պատրիանի աջակողմում, 3 տող.



ԽԱՍ ԶՍ ԴԱ-
ԹՈՍԻ
Ն:

Ծանոթ. Ուշագրավ է անձնանունը, որը մեզ այլուստ հայտնի չէ: Անվան կրճատ տարբերակ կարելի է համարել Դադէ, Դաթէ տարբերակները, որոնք վերաբերում են Արցախի Դադի վանքի կառուցող, Թադետոս առաքյալի աշակերտ Դադին: Չենք բացառում Թադետոս անվան կրճատ ու բարբառային ձևը:

15. Նախորդի ստորև, 2 տող.



ԽԱՍ ԶՍ ԿՈՒԼԱ-
ՂԻՆ Է:

16. Աջակողմյան մեծ պատրիանի կամարին (ձախից), 4 տող.



ԽԱՍ ԶՍ Թ
ՈՐՈՍԻՆ՝
ՈՐԴՈ
ՈՐՀԱՆԻՍԻՆ:

17. Հաջորդը, 3 տող.



ԽԱԶՍ ՅԻՇԱՏԱԿ Է
Ա ՍՏՈՒԱԾԱ ՏՈՒՐ
ԻՆ:

18. Հաջորդը, 2 տող.

ԽԱՍ ԶՍ ԻՇԱՏԱԿ Է ՄԱՄԻՆ ԵՒ ՈՐԴՈ՝
ԹԻԼՈՒՆ:


Ծանոթ. Գրչագիրը վերևում:

19. Մեծ պատրիարհի աջ նիստին, 4 տող.




Խ[Ա] ՉՍ
ՎԱՐԴ
ԱՆԻՆ Է՛
ԱՂԱՄԻՐ[Ի]
ՈՐԴԻՒՆ]:

20. Նախորդի ստորև, 3 տող.



Խ[Ա] ՉՍ ԱՂԱ
ՅԽԱՆԻՆ ԵԻ
Կ[Ո]Ղ [ԱԿ]ՑԻՆ ԻԻՐ:


21. Մեծ պատրիարհի մուտքի ստորև, 2 տող.



Խ[Ա] ՉՍ Յ[Ի]Շ[ԱՏԱ]Կ Է ԴՕԹԻՆ (ԴԱԻԹԻՆ) ԵԻ
ՄՕՐՆ՝ ԽԱՆԱՂԻՆ:

Ծանոթ. Նկատառելով մյուս վիմագրերում ԱԻ երկինջյունի փոխարեն Օ-ի կիրառման ոչ սակավ դեպքերը (ՇԻՆԵՑՕ, ՀՕՐՆ, ՄՕՐՆ), ԵՂ-ԲՕՐՆ)՝ չենք բացառում, որ ԴՕԹ անձնանունը ԴԱԻԹԻ տարբերակը կարող է լինել: Այս առիթով ուշագրավ լրինակ է մոտակա Օղբին գյուղատեղի եկեղեցու մի տապանագիր՝ ...ՈՐ ՄԵՌՕ (առավել տարածված՝ ՄԵՌԱԻ – Գ.Ս.) Ի ՍՏԱՄՊՈՒԼ...:

22. Նախորդի ստորև, 2 տող.




Խ[Ա] ՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ Է ՍՕԿՈՒԼԻՆ ՀՕՐ
ՍԱՐՔ[Ս] ԻՆ:

Ծանոթ. Այստեղ նույնպես հանդիպում ենք ուշագրավ անձնանվան՝ ՍՕԿՈՒԼ: Թերևս, ինչպես վկայված է բառարանում թուրքերենից փոխառնված ՍԱՎԳՈՒԼ իգական անձնանունն է, հիշատակված Զաքարիա Ագուլեցու երկում և Սաւգուլու ձևով՝ 1526 թ. մի հիշատակարանում¹¹:

23. Մեծ պատրիարհի ձախ նիստին, ներքուստ, 3 տող.

**ԽԱ] ՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ Է
ԳԹԻՆ
ՄԱՆԻՆ:**


24. Հյուսիսային որմնամույթի հարավահայաց նիստին, 4 տող.



**ԽԱ]ՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ Է ԴՕԹԻ
ՀՕՐՆ՝ՓԱՆՈՍԻՆ,ՄՕ[ՐՆ]
ԻՂԻՍԱԲԵԹԻՆ, ԵՂԲՕ
ՐՆ՝ ՈՎԱՆԻՍԻՆ:**

Ծանոթ. Դժվարանում ենք այս Դօթին նույնացնել Նախորդ նույնանուն անձի հետ, թեկուզ միայն տարբեր մայրերի առկայության պատճառով:

25. Նախորդի ստորև, 2 տող.



**ԽԱ] ՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ Է
ՆԱ]ՆԱՃԱՆԻ
Ն:**


26. Նախորդի ստորև, 2 տող.

**ԽԱ] ՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ Է ԱՌԱՔ
ԵԼԻՆ:**

Ծանոթ. Գրչագիրը վերևում:

¹¹ Աճառեան 1948, 400:


27. Եկեղեցու խորանի հյուսիսային պատրիանի աջ կողմում, 5 տող.



ԽԱՂ ՉՍ
ԳՐԻԳՈՐԻՆ ՀՕՐԻ
Ն՝ ԱՍԻՃԱՆԻՆ,
ՄՕՐԻ Ն՝ ՎԱՐԴԻ
ԱԹՈՒՆԻՆ:


ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԻՆԱՔԱՐԵՐ

28. Արձանագրված շինաքար՝ դրված եկեղեցու մուտքի բարավոր-խաչքարի վրա, 2 տող.




...ԴՐԻ, ՈՐԴԻ
ԱՌԱՔԵԼԻ:

29. Արձանագրված շինաքար, նախորդի աջ կողմում, 1 տող.




ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է՛...

30. Արձանագրված շինաքար, վերջինիս աջ կողմում, 4 տող.



Խ[Ա] ՉՍ Յ[Ի] ՇԱՏ[ԱԿ Է]
ՆԱ ԶԱՂԻՆ,
ՀՕ[Ր] Ն' ՏՐ
ՈՎԱՆԻՍԻՆ:


31. Արձանագրված շինաքար, 5 տող.



ԵՍ' ՏՐ
ՄԱՐՏ
ԻՐՈՍԱ,
ԳԻՐ, ԹՎ[ԻՆ]
ՌՃԻԸ (1679):

Ծանոթ. Փորագրման տարեթիվը և ԳԻՐ (թերևս՝ գրեցի) բառը վկայում են, որ տեղի Մարտիրոսը որևէ առնչություն ունի վիմագրերի հետ, օրինակ նա կարող էր լինել վկայագրերի փորագրող վարպետը, սակայն այս ու մյուս հիշատակագրությունների տառաձևերի ընդգծված տարբերությունը բացառում է այդ:

32. Արձանագրված շինաքար, 4 տող.




Խ[Ա] ՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ Է ՍԻ
ԱՄՈՆԻՆ, ՀՕ[Ր]Ն
ՄԿԸ[ՐՏ]ԶԻՆ, ՄՕ
ՐՆ' ԵԹԱՐԻՆ:

Ծանոթ. Առաջին անունը, թերևս Սիմոնի բարբառային արտահայտչաձևն է կամ փորագրչի վրիպակ: ԵԹԱՐ իգական անունը, որն ըստ Հր. Աճառյանի՝ ծագել է թուրքերենից և թարգմանվել է «բավական է», մեծ տարածում չի ունեցել, հանդիպում է 16-րդ դարից՝ ձեռագրաց հիշատակարաններում և վիմագրերում: Նմուշներ հայտնի են Նորատուսից, Գավառից: Հայերիս մոտ առավել շրջանառվում է թարգմանված անվանաձևը՝ Բավական¹²:

¹² Աճառեան 1948, 400:


33. Արձանագրված շինաքար, 5 տող.



ԿՈՒԶ
ԱԼԻՆ
ԵՒ ՀՈՒ-
ՌՈՒՄ
ԻՆ:


Ծանոթ. Կարծում ենք, որ երկրորդ տողի սկզբնատառում գրիչը վրիպել է Ա-ի աջ ուղղահայացի փոքր ստեղծը:

34. Արձանագրված շինաքար, 3 տող.



ԽԱ] ՉՍ ԻՇԱՏԱ]Կ [Է]
ՔԱՄՊԱՐ
ԻՆ:

35. Արձանագրված շինաքար, 3 տող.



ԽԱ] ՉՍ ԿՈ
ԻԼՈՒՄԻՆ
ՀՕՐ]Ն' ԱՄՈՒՄԻՆ:

36. Արձանագրված շինաքար, 4 տող.




ԽԱ] ԴՉՍ Կ
ՈՒԼԸ
ՍՏԱ-
ՆԻՆ Է :

Ծանոթ. Կարծում ենք, որ անձնանունը պարսկերեն ծագմամբ Գուլիստան - «վարդանոց» անունից է: Հայոց մեջ տարածված է եղել Ժեղարից, առավել շատ Ժեղ., հանդիպում է Գուլիստան, Կուլիստան Կոլիստան և այլ ձևերով¹³:


¹³ Աճառեան 1948, 400:

37. Արձանագրված շինաքար, 1 տող.



«Խ[Ա] ՉՍ ԻՇ[Ա]Տ[ԱԿ] Է ԱՂԱՄ ԴԱԼԻՆ»:

38. Արձանագրված շինաքար, 4 տող.



«Խ[Ա] ՂՉՍ ԻՇ[ԱՏԱ]Կ [Է] ՅՈՒՍԱՓԻՆ ԿՈՂԱՅԿ]ՑԻՆ
ՄԷԼԻՔԻՆ, ՀՕՐԴՆ՝ ...Ո...Ն
ՄՕՐՆ՝ԿՈՒԼՈՒՄԻՆ,ԵՂԲ
ՕՐՍ՝ՊԱՊԱՃԱՆԻՆ, Ի ՌԺԻԸ (1679):

Ծանոթ. Առաջին տողի վերջնահատվածը՝ մասամբ, երկրորդի նույն հատվածը լիովին եղծված են, ըստ այդմ, վերծանությունը՝ թեական: Սա չորրորդ վիմագիրն է, որում հիշված է «Կուլում» անձնանունը՝ կողակից մահտեսի Մանուկի, կողակից Պալի, դուստր Ամումի, մայր Յուսիփի: Չենք բացառում դրանցից առնվազն երկուսի նույնությունը: Փոխառնված է թուրքերեն «gusum «վարդս, իմ վարդը» բառից...Գրված է նաև Կուլում...»¹⁴: Գործածական է եղել 15-17-րդ դդ.:

¹⁴ Աճառեան 1942, 507:

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հուշարձանի վիմագիր նյութի համակողմանի քննությունը հնարավորություն է ընձեռում առաջադրելու մի քանի եզրակացություն, որոնք առավել կամբողջացնեն մեր պատկերացումները այս հոգևոր կառույցի հիմնադրման, գործունեության, արձանագրությունների այսօրինակ բովանդակության, հնագրության, թվագրության վերաբերյալ:

Եկեղեցին կառուցվել է հուշարձանի մերձակայքում գտնվող բնակավայրի ժողովրդական միջոցներով: Այս կարծիքին ենք հանգել նկատառելով առաջին վկայագրում (նաև շրջակայքի այլ հուշարձանների արձանագրություններում) շինարարության հեղինակի, մեկենասի, կազմակերպչի անվան բացակայությունը: Սույն երևույթը տվյալ ժամանակներում, հատկապես մերձակա տարածքներում, սակավադեպ չի եղել՝ Օդբին գյուղատեղի կիսա-ժայռափոր եկեղեցին (նկ. 7). ... **ՇԻՆԵՑԱԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԹՎԻՆ՝ Ռ:Ճ:Ժ:Ե:** (1666), այնուհետ հիշվում են կաթողիկոսը, թեմի առաջնորդը և տանուտերը: Տեքստը շարունակում է տեր Կիրակոսը. **ՇԻՆԵՑԻ ԽԱՂԱՋՍ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԼՈՅ՝ ԻՄՈՅ ԵՒ ԱՇԽԱՏՈՂԱՅ՝ ԵԿԵՂԵՑԼՈՅՍ...**¹⁵:

Նույն թվին կառուցված Հորադիս գյուղատեղի ս.Նիկողայոս եկեղեցին (նկ. 8) **ԹՎԻՆ՝ ՌՃԺԵ (1666), ՇԻՆԵՑՕ ԵԿԵՂԵՑԼԻՍ ԱՆՈՒՆ ՍԲՆԻԿՈՂԱՌՍԻ, ՈՐ ԳԵՂՈՎ ԱՇԽԱՏԵՑԱՔ**¹⁶, կամ Սերս գյուղի եկեղեցին (նկ. 9) ...**ԵՍ՝ ԱԽԷՃԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՂԵՒ / Է ՍԲ**

¹⁵ Սարգսյան, Մելքոնյան 2012, 110:

¹⁶ Բարխուդարյան 1967, 202, արձ. 654: Ս. Բարխուդարյանն այն վերցրել է Գ. Հովսեփյանից:

ԵԿԵՂԵՑՈՅՍ ՇԻՆԵԼ ԵՏՈՒ. ԱԾ ՈՂՈՐՄԷ ԱՇԽԱՏՈՂԱՑ¹⁷, նաև
մեր եկեղեցին:



Նկ. 7. Օղբին գյուղատեղի եկեղեցին



Նկ. 8. Հորաղիս գյուղատեղի - Ս. Նիկողայոս եկեղեցին

¹⁷ Սարգսյան, Մելքոնյան 2012, 111:



Նկ. 9. Սերս գյուղի եկեղեցին

2. Արձանագրությունները, բացառությամբ 2-3-ի, փորագրված են նույն վարպետի կողմից, ըստ այդմ համաժամանակյա են (1679թ.) և ներկայացնում են համայնքի՝ եկեղեցու կառուցումը հոգացած ընտանիքները:

3. Չնայած վերը նշված հանգամանքների, փորագրիչը, հավանաբար, փորձել է մասամբ խուսափել շարադրանքի միօրինակությունից՝ տեքստի սկզբնահատվածը ներկայացնելով եռակերպ. **ԽԱՉՍ ԻՇԱՏԱԿ Է** (17 օր.), **ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է** (4 օր), **ԽԱՉՍ** (8 օր.) :

4. Վիմագրերը, բացառությամբ երեքի (N^o6, 25, 27) ուղեկցվում են տարատիպ (պարզ, ոճավորված) խաչանշաններով:

5. Յուրաքանչյուր արձանագրություն ներառում է 1 խաչ, բացառությամբ N^o 4 (3 խաչ), N^o 7 (2 խաչ), N^o 28 (3 խաչ), N^o 34 (5 խաչ):

6. Անմիջական կապ չենք տեսնում յուրաքանչյուր վիմագրում հիշված անձանց և փորագրված խաչերի քանակի միջև, վերջիններս լինեն պարզ, թե ոճավորված:

Նշված երևույթը կապված չէ նաև վկայագրում հիշված անձանց «կարգավիճակից», դրանք «հիշատակակիր» են, թե այդ անձանց հարազատներ, օրինակ. 1. **ԽԱՉՍ ԻՇԱՏԱԿ Է ՄԱՀ/ԴԱՍԻ ՄԱՆՈՒԿԻՆ/ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ՝ ԿՈՒ/ԼՈՒՄԻՆ** (1 խաչ), 2. **ԽԱՉՍ ԻՇԱՏԱ/Կ Է ԹՈՒՄԻՆ, /ՈՐ Է ՈՐԴԻ ՄԱՆՈՒԿԻՆ** (1 խաչ): Այս վիմագիր նմուշները կարող են օրինակ ծառայել հոգուտ մյուս խնդրին. «հիշատակակիր» երկու անձինք վկայված են (ուղեկցվում են) մեկ խաչապատկերով, երկրորդում, չնայած այդ «կարգավիճակով» հանդես է գալիս մեկ անձ, սակայն նույնպես փորագրված է մեկ խաչ: Ըստ այսմ առարկայանում են խնդրիս առնչվող մի քանի թնջուկ. ինչով է պայմանավորված նույնիմաստ վիմագրերում «պարզ» և փոքր-ինչ ոճավորված նշանով խաչավորումը: Արդյոք դա կարող էր կապ ունենալ նվիրատվության առարկայի «չափ ու քանակի կամ որակի» հետ: Չնայած վկայագիրը չի նպաստում այս հարցի պարզաբանմանը, սակայն հակված ենք ենթադրելու, որ այդպիսի «կապ» եղել է:

7. Վիմագրերում պատկերված խաչերի քանակական (թվական) պատկերը հետևյալն է.

- մեկական խաչով՝ 28 բնագիր, խաչերից 3-ը՝ ոճավորված,
- երկուական խաչով՝ 3 բնագիր,
- երեքական խաչով՝ 2 բնագիր,
- հինգ խաչով՝ 1 բնագիր, մեկը ոճավորված:

8. Բնագրերում հիշված անձինք վկայված են երկկերպ. միայն հիշատակակիր, որոնք կարող են լինել մեկ և ավելի ու նրանց հետ առնչվող ամենամոտ հարազատը.


- **ԽԱՉՍ ՅԻՇԼԱՏԱՂԿ Է ԱԼՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ**: (1 հիշատակակիր)
- **ԽԱՂ ՉՍ ԻՇԼԱՏԱՂ Կ Է ՄԱՀԴԱՍԻ ՄԱՆՈՒԿԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՂ ՑԻՆ՝ ԿՈՒԼՈՒՄԻՆ**: (2 հիշատակակիր)
- **ԽԱՂ ՉՍ ԻՇԼԱՏԱՂԿ Է ԹՈՒՄԻՆ** [Ն] , **ՈՐ Է ՈՐԴԻ ՄԱՆՈՒԿԻՆ** (1 հիշատակակիր + մերձավոր հարազատ)

Հարկ ենք համարում նշել, որ հիշյալ երևույթը այլ հուշարձանների որմերին արտահայտված է տարակերպ և կարճ հիշատակագրությամբ՝

– ուղեկցվող խաչով, պատի մեջ ագուցված, հիմնականում պարզ հարդարմամբ խաչքարով,

– միայն խաչապատկերով, որի «հասցեատերն» ու նպատակը հայտնի էին, թերևս, միայն քանդակագործին և միաբանության անդամներին: Վերջինիս կապակցությամբ մեր երիտասարդ գործընկեր Ավետիք Ղազարյանն առաջադրեց մի վարկած, համաձայն որի՝ այդ «միայնակ» խաչերը կարող էին քանդակվել ի հիշատակ տվյալ վանքի հանգուցյալ միաբանների: Տեսականորեն չբացառելով երևույթի այսօրինակ մեկնաբանության հավանականությունը, այդուհանդերձ նույն պատին, երբեմն, հարյուրավոր տարաչափ ու միաձև խաչերի առկայությունը, առնվազն վկայում են նաև այլ դրդապատճառների գոյությունը:

Մեկնաբանման տեսակետից առավել խնդրահարույց են սուկ խաչերով արտահայտված որմնահարդարանքները, որի ուշագրավ օրինակ է Աշտարակի Կարմրավորի (նկ.10) որմնային բացվածքը՝ 59 տարատիպ խաչապատկերներով:



Նկ.10. Կարմրավոր եկեղեցու որմնային բացվածքը


Խաչքարային մշակույթի մերօրյա լավագույն գիտակ Հ. Պետրոսյանը, թերևս նկատառելով այսօրինակ «անդեմ» խաչառատ հարդարանքը, գրում է. «Խաչի նշանը կամ պատկերը գծելն, ըստ



Նկ. 11. Տաթև, Ս. Առաքելոց եկեղեցու արևելյան խաչատար որմը
(առկա է 197 խաչապատկեր)



Նկ. 12. Որոտնավանքի գմբեթավոր եկեղեցու թմբուկի խաչապատկերները
(առկա է 40-ը)



Նկ. 13 Նորավանքի գավթի արևմտյան որմի «խաչադաշտը»
(առկա է 201 խաչապատկեր, 2 որմնագույց խաչքար)

երևույթին, վեր էր ածվել սրբազան-մոգական և հոգեբանական մի գործողության, որի արդյունքում հոգևոր շատ կառույցների պատերը պատվում էին տասնյակ ու տասնյակ պարզունակ գծախաչերով...»¹⁸: Երբեմն նույն պատին «գոյակցել են» «անդեմ» և «դիմավոր» խաչադաշտերը, ինչպես Տաթևի վանակառույցում (նկ. 11):

«Անդեմ» խաչերի ուշագրավ երևույթ է Որոտնավանքի (նկ. 12) գմբեթավոր եկեղեցու թմբուկի արևմտահայաց կողմում փորագրված բազմաթիվ խաչապատկերներով հարդարանքը:

Հ. Պետրոսյանի վերոնշյալ դիտարկումը գրեթե միակ անդրադարձն է արժարժվող խնդրին, սակայն ցանկալի կլիներ այն ուղեկցվեր մի շարք հարցերի պատասխաններով. ինչ շարժառիթնապատակներով են առաջնորդվել որմերը «տասնյակ ու տասնյակ

¹⁸ Պետրոսյան 2008, 71:

պարզունակ գծախաչերով» պատելիս, ովքեր են եղել այդ «քայլի նախաձեռնողն ու իրականացնողը», արդյոք միայն «սրբազան-մոզական և հոգեբանական» տոգորմամբ, ինչն, անշուշտ, որպես գաղափարական հենք միանգամայն ընդունելի կլիներ: Սակայն նման «հարդարանքների» ոչ սակավադեպ օրինակներն առաջադրում են նաև այլ հարցեր. արդյոք այդ «անդեն» խաչերի չափերը, զարդաքանդակային հարդարանքը, տեղի ընտրությունը որոշվում էր վանքերում, եկեղեցիներում կամ, ընդհանրապես հայոց եկեղեցում գոյատիրող, այդօրինակ իրողությունները կանոնակարգող որոշակի նորմերով, արդյոք անհիշատակագիր խաչապատկերների «ետևում» նկատառված էր հավատավոր ուխտավորն ու նվիրատուն, որոնք, կամ միաբանությունը, ելնելով ինչ-որ հանգամանքներից նպատակահարմար չէին համարում թողնել հիշատակագիր, թեկուզ միայն անձնանունը: Միգուցե այդ «հանգամանքները» գրառվել են վանքի «Քոթուկ»-ում: Միգուցե այդ «քայլով» ցանկացել են հատկանշել սուրբ կառույցի «աստվածաշունչ» էությունը, առավել սրբակյացությունը: Գուցե առաջնորդվել են մեկ այլ, ինչպես վերևում նշեցինք, թերևս գեղագիտական մտայնությամբ՝ «խաչադաշտը» դիտարկելով կառույցի որմնահարդարանքի կարևոր ու անհրաժեշտ տարր:

Ստիպված ենք «խոստովանել», որ առայժմ մեզ հասու չէ այս «խաչադաշտ» որմնահարդարանքի բուն իմաստաբանության միանշանակ մեկնաբանությունը, սակայն ցանկանում ենք մատնանշել մի քանի դիտարկում, որոնք, կարծում ենք «ճշմարտամոտ» են և կարող են նպաստել «ճշմարտության» բացահայտմանը.

- խաչապատ հարդարանքի բոլոր «ներկայացուցիչները», անկախ չափերից, ունեն նույն գծապատկերը,
- բոլոր խաչերը կամ խաչախմբերը փորագրված են առանձին քարերի վրա, ինչն անուղղակիորեն կարելի էր դիտարկել որպես մի գործընթաց, երբ խաչերը քանդակվել են մինչև շինաքարի տեղադրումը պատում,

- նույն քարի վրա առկա են միանման և տարաչափ խաչեր, որոնք, մեր ենթադրմամբ, կարող են վերաբերել մեկ ընտանիքի (ծնող, երեխա, հարազատ),
- խաչադաշտը ստեղծվել է նույն ժամանակահատվածում, թերևս, նույն քարգործ վարպետի կողմից և նույն առիթով,
- առիթը, կարծում ենք, եղել է այնպիսին, ինչին մասնակցել կամ նկատառվել են բազմաթիվ անձինք, ենթադրելի է՝ գյուղական համայնք,
- Նորավանքի գավթի (նկ.13) խաչադաշտի մի պատկերից՝ քարի կենտրոնում մեծ խաչ, աջ կողմում փոքր և արձանագրություն՝ Ի ՔՍ, կարելի է ենթադրել, որ նկատի են ունեցել հանգուցյալին (փոխեցաւ ի Քրիստոս), այսինքն այդ «առիթին» մասնակից է եղել այդ ժամանակ արդեն մահացած անձը:

Այս դիտարկումները «հարկադրում» են դրանց հիմամբ մատնանշելու եզրահանգումը, ըստ որի այս խաչադաշտով արտահայտված է «Ժողովրդական լայն զանգվածների» մասնակցությունը վանքին առնչվող մի կարևոր իրադարձությանը, որպիսին կարող էր լինել շինարարական, առավել հավանական՝ նորոգչական կամ վերակառուցման գործընթաց: Կարող ենք «երևակայել» ավելին. խաչադաշտերը զետեղվել են այն որմնահատվածում, որտեղ իրականացվել են այդ աշխատանքները:

Հարկ ենք համարում ներկայացնել քննարկվող երևույթի նաև այլ արտացոլումներ, որոնք առավել կընդարձակեն մեր պատկերացումները և կհարստացնեն նյութի աղբյուրագիտական հենքը: Անդրադարձն առնչվում է հիշատակակիր խաչապատկերներին:

Այդօրինակ պատկեր առկա է Կոնդի Ս.Հովհաննես եկեղեցու որմնագույց վիմագրակիր խաչքարերի հիշատակագրություններում:

Երևանի Կոնդ թաղամասի բարձրադիր տարածքում 1679 երկրաշարժի հետևանքով առաջացած «ավերակների տեղում, բոլո-

րովին նոր հիմքերի վրա»¹⁹, 1710 թ. կառուցվում է ցայսօր կանգուն եկեղեցի, մեկենասությամբ բնիկ կոնդեցի, Երևանի մեծահարուստ մելիքական ընտանիքներից մեկի, XX դարասկզբին Երևանին երկու քաղաքապետ տված Մելիք-Աղամալյանների: Եկեղեցու կառուցման կամ «ի հիմանց» վերաշինման թվականը, ըստ Կ. Ղաֆադարյանի՝ զետեղված է կառույցի արևելյան պատի վերնամասում, որմնագույց խաչքարերի միջակայքում. «Թվ(ին) Ռ/ՃԾԹ (1710)»²⁰: Այս թվականակերտ վկայագրի ծախսակողմում փորագրված է հուշարձանի կարևորագույն արձանագրությունը, որով հավաստվում է, որ «Կաման Ա(ստուծո)յ / եկեղ(ե)ց(ի)ս մելիք / Աղամալ շինեց յ(ի) շ(ա)/տակ իւր եւ ծն(ո)ղաց Մէ/լ(ի) Ծ(ա)-տ(ու)րին, Խ(ա)նք(ե)կու/ն եւ որդոց՝ Մելիք Նազ(ին), / Ծ(ա)տ(ու)րին, Սհ(ա)կին, Աղ(ա)վ(ելին)»²¹:

Կ. Ղաֆադարյանի կողմից ընդօրինակված ու հրատարակված է 17 արձանագրություն, որոնցից ոչ մեկը թվագրված չէ: Սա նույնպես ուշագրավ է և սակավադեպ: Փաստելով այս իրողությունը՝ նկատառելով նաև վերը նշված առանձին թվականը՝ հրատարակիչը գտնում է, «որ այդ թվականին էլ՝ երկրաշարժից (1679 թ.) հետո կառուցվել է եկեղեցին, որովհետև նույն պատին կան մի շարք խաչքարեր, որոնք փորագրվել ու պատերի մեջ են հազցվել 1710 թ. եկեղեցին վերակառուցելու ժամանակ»²²: Մեկ շինության որմերին այսքան անթվակիր և հիշատակագրություն-արձանագրությունների առկայությունը հնարավոր ենք համարում պայմանավորել նաև դրանց համաժամանակյա, նույնառիթմ և գրեթե նույնաբովանդակ լինելու իրողությամբ, այսինքն հիշատակագրությունները որմերին զետեղվել են եկեղեցու շինարարության ավարտին՝ 1710 թ., այդ գրվածքներում փաստվել են գործին նպաստավորողներն ի դեմս Մելիք-Աղամալյան գերդաստանի ներկայացուցիչների, մեր-

¹⁹ Ղաֆադարյան 1975, 46:

²⁰ Ղաֆադարյան 1975, 170, արձ. 93:

²¹ Ղաֆադարյան 1975, 170-171, արձ. 94:

²² Ղաֆադարյան 1975, 108:

ծավորների և այլ նվիրյալների (գրեթե նույն իրողությունը՝ արձանագրված Վայոց Ձորում):

Մելիք Աղամալի նմանօրինակ «արարքի» առհավատչյաներ կարելի է դիտարկել նաև Երևանի ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի տեղում եղած Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատին ագուցված 1693 թ. խաչքարի և արևելյան պատի մարմարիոնե խաչքարի բեկորի հիշատակագրությունները²³:

Կարծում ենք, որ մեր քննության առարկային են վերաբերում Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արևելյան ու հարավային որմերին ագուցված 10 խաչքարերի վկայագրերը: Բոլոր բնագրերն սկսվում են միօրինակ բառակապակցությամբ՝ ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱԶՍ, բացառությամբ մեկի՝ ՍՈՒՐԲ ԽԱԶՍ ՅԻՇԱՏԱԿ Է, այնուհետ հիշատակակիր անձանց անունները: Հինգ արձանագրություն թվագրված է՝ մեկը՝ 1692, մյուսները՝ 1693 թ.: Ինչպես նշում է Կ. Ղաֆադարյանը. «Այդ տարեթվերն էլ պետք է ընդունենք իբրև հիմք երկրաշարժից հետո եկեղեցին վերակառուցելու վերաբերյալ»²⁴: Հիշատակակիր խաչքարերի համադիր քննությամբ ենթադրելի է, որ դրանք առնչվում են եկեղեցու կառուցմանը, թերևս հայտնի մեծահարուստ-բարերար, մելիք Աղամալի հիմնական մեկենասությամբ, որի անունը երկիցս վկայված է հիշյալ խաչքարերին: Այսինքն, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, ամենայն հավանականությամբ կառուցվել է 1692-1693 թթ.²⁵:

Իսնդրո առարկա երևույթի առավել համապարփակ պատկեր երևակվում է Ագուլիսի Ս. Քրիստափոր եկեղեցու վիմագրերում: Կառույցի որմերին առկա են 25 վիմագիր, որոնցից 18-ը փորագրված են որմնագույց խաչքարերին, 2-ը Ս. Աստվածամոր ու Ս. Գրիգորի պատկերաքանդակներին, 5-ը ուղղակի սրբատաշ քարերին Բոլոր վկայագրերը հիշատակագրություններ են՝ բաղկացած

²³ Ղաֆադարյան 1975, 162-163, արձ. 71, 75:

²⁴ Ղաֆադարյան 1975, 107:

²⁵ Հարությունյան 2021, 91:

ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ Է, ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է, ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ԱՌՔՍ, ՅԻՇԵԱ ՔՍ ԱԾ, ՅԻՇԵԱ ՏՐ ՔՍ բառակապակցություններից: Առկա են նաև փորագրման նույն նպատակի և առիթի առկայությունը փաստող իրողությունները, ինչը կարող էր վերաբերել եկեղեցու շինարարական կամ նորոգչական գործին, ինչպես նաև այն իրականացնող անձանց անուններին: Թվականները փորագրված են տեքստի սկզբում կամ վերջում: Բովանդակային այս միօրինակությունը, նկատառելով նաև նույն թվականը, մեզ հուշում է, որ խոսք է գնում ինչ-որ գործունեություն նյութապես նպաստավորելու մասին: Հարկ ենք համարում մատնանշել, որ այդ բազմաքանակ վիմագրերի մեջ բացակայում է բուն շինարարական վկայագիրը կամ սույն գործընթացն իրականացնող, կազմակերպող կամ նպաստավորող անձի անունը: Ըստ այսմ տպավորություն է ստեղծվում, որ վիմագրերում հիշված անձինք են ստանձնել այդ պատվաբեր գործի իրականացումը կամ գլխավոր «դերակատարը» եղել է վաճառական ու ուղեգիր-պատմիչ Զաքարիա Ագուլեցին: Խնդրո առարկայի կապակցությամբ ուշագրավ տեղեկատվություն է հաղորդում ինքը՝ պատմիչը: Զաքարիան պատմում է, որ 1670 թ. դեկտեմբերի 15-ին Ագուլիսի Վերին թաղի Սուրբ Քրիստափոր եկեղեցին ինքնիրեն փլվում է²⁶: Եկեղեցին, ըստ ավանդության, կառուցել է Թադևոս Առաքյալը: Այն կանգուն է մնացել մինչև 1630 թ.: Նույն թվականին վերանորոգվում և այդպես գոյատևում է մինչև 1670 թ., երբ նորից անհրաժեշտություն է առաջանում նորոգչական աշխատանքներ կատարելու: Ստեղծվում է կազմակերպչական խումբ (վերակացուներ)՝ «Վերին թաղի խոջայ Գուլնազարն, Քիչիբեկն, Մալխանն վերակացու եղին, ժողովրդեան փողով շինեցին»²⁷: Այս «վերակացուներից» առաջին երկուսը վկայված են եկեղեցու հիշատակագրություններում: Զաքարիա Ագուլեցին ուշագրավ մանրամասներ է ներկայացնում

²⁶ Ագուլեցի 1938, 95:

²⁷ Ագուլեցի 1938, 96:

այդ շինարարական աշխատանքների մասին, որոնք ընթացել են երեք փուլով. «Թվին ռճի (1671 – Գ.Ս.) ըսկիսբն արարին յին եկեղեցին (հավանաբար նկատի ունի ավերակները- Գ.Ս.) վեր կալան, յիմն գծեցին քարով, կրով, Քուրդստանայ²⁸ ուստայ բերին, շինեցին մինչի եհաս հողի հավասար (թերևս, եկեղեցու հիմքերի մասին է)»²⁹: Հաջորդ՝ 1672թ. նույն Քուրդստանից «Լ (30 – Գ.Ս.) ուստայ եկին, տաշած քարով շինեցին. Մինչի նոյեմբեր ամիսն հասաւ դռների գլուխն»³⁰: Շինարարությունն ավարտվում է 1673թ., երբ մարտ ամսին 40 վարպետ է գալիս և «տաշած քարով հասուցրին մինչի փայի թաղն»³¹: Աշխատանքներն ավարտվում են նոյեմբերի մեկին և «ուստէքն վարցն առան, գնացին»³²: Այնուհետ Ազուլեցին փաստում է մի ուշագրավ երևույթ, ինչն անմիջականորեն առնչվում է քննարկվող նյութին, այն է՝ ինչ նպատակով կամ առիթով են եկեղեցիների որմերին փորագրել ու ագուցել բազմաթիվ խաչեր ու խաչքարեր, երբեմն ուղեկցված կարճառոտ հիշատակագրություններով: Մինչ մեկնելը, թերևս նույն «ուստէք»-ը «այս եկեղեցուս գ (3 – Գ.Ս.) որմին իե (25 – Գ.Ս.) խաչ ոմն պատկեր վասն յիշատակի գրեցին»³³: Ասվածին հետևում է խաչեր փորագրելու «իրավաֆինանսական» փաստագրումը. «Ամէն խաչի, թէ պատկերի մէկ մէկ թուման տվին եկեղեցուն»³⁴: Առաջին հայացքից պարզ է, որ եկեղեցու որմին մեկ խաչ կամ մեկ քանդակապատկեր³⁵ փորագրե-

²⁸ Այս տեղանվան կապակցությամբ Մ. Հասրաթյանը գրում է, որ այդտեղ նկատի է առնված Վասպուրականը (**Հասրաթեան** 1997, 208):

²⁹ **Ազուլեցի** 1938, 96:

³⁰ **Ազուլեցի** 1938, 96:

³¹ **Ազուլեցի** 1938, 96:

³² **Ազուլեցի** 1938, 96:

³³ **Ազուլեցի** 1938, 96:

³⁴ Տաճարի որմին առկա են Ս. Աստվածամոր և Ս. Գրիգորի պատկերաքանդակները:

³⁵ Մեր կողմից վերևում ներկայացված իրողություններին, որոնք վերաբերում են Ս. Քրիստափոր եկեղեցու վերանորոգչական սույն գործընթացին,




լու իրավունքի համար «սուրբ ուխտին» վճարվում էր մեկ թուման: Արդ. եկեղեցու երեք որմերին պարզագույն հիշատակագրությամբ ուղեկցվող քսանհինգ խաչապատկերը «վասն» ինչ «յիշատակի գրեցին», իրենց արած աշխատանքի, թե մեկ թումանով «գնված» վկայագրումով խաչապատկեր եկեղեցու որմերին զետեղելու իրավունք ստանալու: Նշյալ երկու նպատակն էլ, թերևս, կարող են տրամաբանական նկատվել: Սակայն որոշ հարցեր լուսաբանման «կարոտ են». արդյոք խաչանշանը պետք է ուղեկցվեր «խաչատիրոջ» անվան վկայագրմամբ, թե վերջինիս կրավարարեր միայն խաչապատկերի առկայությունը, մեկ անձին «հասնում էր» կամ իրավունք էր իր անվամբ «ունենալ» մեկ, թե ավելի խաչանշան, ինչով էր պայմանավորված խաչի պատկերումը պարզ և ոճավորված կամ դրանց զուգորդմամբ արված հարդարանքով: Վերջին

հարցադրման առիթով ուշագրավ նմուշներ են ներքո լուսապատկերները (նկ. 14):

Ուստիանը «ներառված է» 5 ոճավորված և 5 պարզ խաչապատկերների տիրույթում, Դուտիշը՝ 3 ոճավորված, 2 պարզ, Տեր Մարգարը՝ միայն 3 ոճավորված: Ըստ այսմ, կարծում ենք, որ առկա չէ որևէ օրինաչափություն, ի մասնավորի՝ խաչապատկերի քանակի կամ ձևավորման ու վկայագրված անձանց թվաքանակի առնչության մեջ:

Հիշատակագրակիր խաչապատկերների «նպատակային» ու բովանդակային քննությունը հնար է տալիս փաստելու առնվազն երկու իրողություն. դրանք եկեղեցական կառույցների որմերին զետեղելու իրավունքը կամ պատիվը կրոնական հաստատության կողմից տրվում էր որևէ աշխատանքի և տարաբնույթ նվիրատվությունների դիմաց կամ ուղղակի կարող էր վաճառվել, ինչպես Ագուլիսի Ս.Քրիստափորի պարագայում: Վերը նշվածով պայմանավորել «անհիշատակ» խաչապատկերների առկայությունը,

մանրամասն անդրադարձել է ճարտարապետության պատմաբան Մ. Հասրաթյանը, իր վերը հիշված հոդվածում:



Ոսփրանին

Դուլփիշին

Մարգարին

Նկ. 14 Միայն անձնանուններով խաչապատկերների օրինակներ
Կամարիս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին

կարծում ենք, այնքան էլ իմաստավորված չէ, քանի որ զուտ մարդկային բնավորությամբ՝ նվիրատուն կցանկանար, որ տվյալ ուխտատեղ այցելողները տեղեկանային իր անձի և «արարքի» մասին: Քանի որ գրավոր սկզբնաղբյուրներում մեզ չի հանդիպել փաստացի վկայություններ խնդրո առարկայի վերաբերյալ, ուստի, ստիպյալ փորձենք «համակերպվել» վերը արծարծած այն մտքի հետ, որ գծագրական նույնատիպ պատկերով, երբեմն միայն չափերով առանձնացող «անհիշատակ» բազմաթիվ խաչապատկերներով հարդարված «խաչադաշտերը» կապված են հոգևոր կենտրոնին՝ մարդկանց մեծ խմբի (թերևս համայնքի) կողմից արված խոշոր նվիրատվության կամ շինարարական (առավել հավանական է՝ նորոգչական) աշխատանքների նպաստավորման հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վիմագրագիտության կարևոր ու առաջնահերթ խնդիրներն են նորահայտ արձանագրությունների հավաքումը, գիտական ժամանակակից մեթոդներով ուսումնասիրությունն ու վերծանությունը և պատշաճ հրատարակությունը: Քարեղեն վկայագրերի հրապարակման լավագույն ու անհրաժեշտ ձևը վիմագրերի «Դիվան»-ներն են (ժողովածուները), որոնք կազմվում են ըստ պատմա-աշխարհագրական և վարչական բաժանման: Այս աշխատանքին զուգահեռ, վիմագրագետներն անդրադառնում են նաև «Դիվան հայ վիմագրության»՝ ցայսօր հրատարակված պրակներում հայտնի և անհայտ պատճառներով չընդգրկված տարածքներում վիմագրահավաք հետազոտություններ կատարելուն՝ ձգտելով լրացնել պրակների ատաղձը:

Մասնագիտական հանրությանը ներկայացված սույն ուսումնասիրությունը բովանդակում է հիշյալ տարածքի «Մեծ վանք» կոչվող կիսավեր եկեղեցու արձանագրությունների գիտական հրատարակումը և դրանց բովանդակությամբ պայմանավորված՝ մի շարք ուշագրավ երևույթների քննությունը:

Հուշարձանի որմերին և ընկած շինաքարերի վրա պահպանվել են 38 արձանագրություն: Բնագրերի վիմագրագիտական քննությամբ պարզեցինք հավանական մի քանի իրողություն. եկեղեցին, համաձայն արևմտյան մուտքի վկայագրի, կառուցվել է 1679թ., վիմագրերից առնվազն 35-ը փորագրվել են եկեղեցու կառուցման առիթով, հիշված անձինք, թերևս, ներկայացնում են մեկ գյուղական համայնք և նպաստել են շինարարությանը:

Նշվածի հիմամբ և որպես համադիր նյութ դիտարկելով այլ հուշարձաններում բովանդակային ու քանդակային արտահայտ-

չաձևերով նմանօրինակ երևույթները՝ որպես պարզ ու համառոտ հիշատակագրությամբ որմնագույց խաչքարեր, որմերին փորագրված, նույնպիսի հիշատակագրություններով ուղեկցվող խաչապատկերներ և, երբեմն, հարյուրների հասնող «համր» (առանց հիշատակագրությունների) խաչապատկերներ՝ հնարավոր եղավ մատնանշել, որ այսկերպ արձանագրել են տարբերակված արտահայտչաձևերով, սակայն նույնիմաստ և միաբովանդակ գործառույթ, այն է՝ եկեղեցու նկատմամբ հավատավոր նվիրատուի բարեգործության փաստագրումը:

РЕЗЮМЕ

Важные и первоочередные задачи эпиграфики – сбор нововыявленных надписей, их исследование, анализ современными научными методами и публикация надлежащим образом. Наилучшим и необходимым способом публикации каменных свидетельств являются «Корпусы» (сборники) эпиграфических надписей, которые составляются согласно историко-географическому и административному делению. Параллельно с этой работой эпиграфисты обращаются к сбору и исследованию эпиграфических памятников на территориях, которые по известным и неизвестным причинам не были включены в изданные по сей день выпуски «Корпуса армянской эпиграфики», стремясь дополнить материалы выпусков. С такой целью мы с нашим коллегой У. Мелконяном в 2009 г. отправились в двухдневную научную экспедицию в область Вайоц дзор, избрав для исследования южную часть области, которая осталась за рамками выпуска, посвященного Вайоц дзору. В результате полевых исследований нам удалось скопировать с памятников более ста эпиграфических надписей.

Представленное профессиональному сообществу данное исследование содержит научную публикацию надписей находящейся на упомянутой территории полуразрушенной церкви Мец ванк и обсуждение ряда заслуживающих внимания фактов, обусловленных их содержанием.

На стенах и обрушенных камнях памятника сохранилось 38 надписей. Эпиграфический анализ оригиналов выявил несколько вероятных фактов: церковь, согласно надписи на западном входе, была построена в 1679 г.; по крайней мере 35 надписей были вы-

сечены по поводу строительства церкви, упомянутые в них лица, вероятно, представляют одну сельскую общину и содействовали строительству церкви.

Основываясь на указанном и рассматривая в качестве сопоставимого материала схожие по содержанию и выразительным средствам явления в других памятниках – внутристенные хачкары с простыми и лаконичными надписями, высеченные на стенах изображения крестов с такими же надписями и порой достигающие до сотен «немые» (без надписей) изображения крестов – мы имели возможность показать, что таким способом, разными выразительными средствами фиксировалась одинаковое по содержанию и смыслу явление – засвидетельствование благотворительности в пользу церкви верующего дарителя.

SUMMARY

The significant and prioritized issues in epigraphy encompass the collection of newly discovered inscriptions, their study and deciphering employing modern scientific methods, and their subsequent proper publication. The most effective and essential means of publishing stone certificates is through the “Divan” of epigraphs compiled according to historical-geographical and administrative divisions. In addition to this endeavor, epigraphists make use of the “Corpus of Armenian Epigraphy” for conducting epigraphic research in areas not covered in currently published fascicles for unknown reasons, with the aim of comprehensively enhancing the corpus of fascicles. In pursuit of this objective, a two-day scientific expedition to the Vayots Dzor province was undertaken in 2009, in collaboration with our colleague H. Melkonyan. The southern region of the marz was selected as the exploration area, which had not been included in the published fascicle of Vayots Dzor. The field research yielded the documentation of over a hundred epigraphs from various monuments.

This study, presented to the professional community, encompasses the scholarly publication of inscriptions found within the partially deteriorated structure known as the “Great Monastery,” situated within the aforementioned area. Additionally, it involves the examination of several noteworthy phenomena pertaining to their content.

A total of 38 inscriptions were documented on both the walls of the monument and on fallen building stones. Through epigraphic analysis of the originals, several significant findings emerged: based on the inscription at the western entrance, it was determined that the church was constructed in 1679. Moreover, at least 35 of the inscrip-

tions were carved to commemorate the construction of the church, suggesting the likely involvement of individuals from a rural community who contributed to its building efforts.

Based on the above and considering similar phenomena, material in other monuments with analogous content and sculptural expressions, such as khachkars with simple and brief memorial inscriptions embedded in the masonry, cross images accompanied by similar memorial inscriptions, and sometimes hundreds of “dumb” (without inscriptions) crucifixes, it has become evident that these various expressions serve the same function of documenting the benevolence of a faithful donor towards the church, despite manifesting in different forms with consistent meaning and content.

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Նկ.15. «Վանք» եկեղեցու արևմտյան մուտքը



Նկ.16. Արձ.1



Նկ.17. Արձ.2,3,4




Նկ.18. Արձ. 5,6



Նկ.19. Արձ.7



Նկ.20. Արձ.8



Նկ. 21. Արձ. 9, 10



Նկ. 22. Արձ. 11



Նկ. 23. Արձ. 12, 13



Նկ. 24. Արձ. 14, 15



Նկ. 25. Արձ. 19, 20



Նկ. 26. Արձ. 16




Նկ. 27. Արձ. 17, 18



Նկ. 28. Արձ. 21, 22



Նկ. 29. Արձ. 24



Նկ. 30. Արձ. 25, 26



Նկ. 31. Արձ. 27



Նկ. 32. Արձ. 28



Նկ. 33. Արձ. 29



Նկ. 34. Արձ. 30



Նկ. 35. Արձ. 31




Նկ. 36 Արձ. 32



Նկ. 37. Արձ. 33



Նկ. 38. Արձ. 34



Նկ. 39. Արձ. 35



Նկ. 40. Արձ. 36



Նկ. 41. Արձ. 37



Նկ. 42. Արձ. 38



Նկ. 43. Եկեղեցու բուն մուտքը երիզող վկայագրերը



Նկ. 44. Եկեղեցու մուտքը ներսից



Նկ. 45. Հյուսիսային պատի որմնախցերը՝ ներքուստ



Նկ. 46. Եկեղեցու հյուսիսային պատի պատրիաններ



Նկ. 47. Եկեղեցու հյուսիսային պատի պատրիան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ազուլեցի 1938** – Զաքարիա Ազուլեցու որագրությունը, յերևան, Արմֆանի հրատ., 1938, 198 էջ:
- Աճառեան 1942** – Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, ԵՊՀ հրատ., 1942, 633 էջ:
- Աճառեան 1944** – Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, ԵՊՀ հրատ., 1944, 682 էջ:
- Աճառեան 1948** – Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երեւան, 1948, 683 էջ:
- Ասատրյան, Հովհաննիսյան 2022** – Ասատրյան Ա., Հովհաննիսյան Ա., Երկրաշարժերը Վայոց ձորում և դրանց ազդեցությունը պատմաճարտարապետական հուշարձանների վրա, Երևան, [Հեղինակային հրատ.], 2022, 330 էջ:
- Բարխուդարյան 1967** – Բարխուդարյան Ս. (կազմ.), Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 425 էջ:
- Հասրաթեան 1997** – Հասրաթեան Մ., Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, «Հայկա-գեան Հայագիտական Հանդես», հ. ԺԷ, Պէյրուֆ, 1997, էջ 205-217:
- Հարությունյան 2017** – Հարությունյան Ա., 17-18-րդ դդ. եկեղեցիների որմերին ազդեցված խաչքարերը. հորինվածքը, գործառույթը, հիշատակագրությունը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2017, N 3, էջ 118-132:
- Հարությունյան 2021** – Հարությունյան Ա., Հին Երևանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուերեսնի – Ս. Պողոս-Պետրոս, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2021, 144-9 ներդիր էջ:
- Ղաֆադարյան 1975** – Ղաֆադարյան Կ., Երևան. միջնա-դարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 249 էջ:
- Պետրոսյան 2008** – Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 2008, 393 էջ:
- Սարգսյան, Մելքոնյան 2012** – Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Վիմագրագիտական էսքիզներ-2, «Պատմաբանասիրական հանդես», 2012, N 3, էջ 94-119:

ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ ՀԻՇՎԱԾ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբռահամ, տեր, ամուսին Ամելիքի
Ախիճան, հայր Գրիգորի, ամուսին Վարդխաթունի
Ածատուր (Աստվածատուր), հիշված է
Աղամիր հայր Վարդանի
Աղայխան, հիշված է
Ամելիք, կողակից Աբռահամի
Անիս, հայր Թորոսի
Առաքել, հայր Մկրտիչի
Առաքել, հիշված է
Առաքել, հիշված է
Գթինման, հիշված է
Գրիգոր, որդի Ախիճանի
Դաթոս, հիշված է
Դօթ (Դաւիթ), որդի Խանաղի
Դօթ, որդի Փանոսի
Եղիկ, կողակից Մկրտիչի
Եղիսաբետ, կողակից Կոստանդ քահանայի
Եղիսաբեթ (Իղիսաբեթ), մայր Դօթի, կողակից Փանոսի
Եղիսաբեթ, կողակից Օ(աւ)ետիսի
Թելի, որդի Մամին
Թորոս, որդի Անիսին (Ոհանիսին)
Թումա, որդի Մանուկի
Խանաղ, մայր Դօթի
Կիրակոս, տեր, գրիչ, որդի տեր Վարդանի
Կիրակոս, որդի Նավի

Կոստանդ, քահանա, ամուսին Եղիսաբետի
Կուլաղ, հիշված է
Կուլում, կողակից մահտեսի Մանուկի
Կուլում, կողակից Վարդանի
Մամ, մայր Թիլու
Մանուկ, մահտեսի, ամուսին Կուլումի
Մանուկ, հայր Թումի
Մարան, հիշված է
Մարիան, կողակից Ոսկանի
Միրզախան, հիշված է
Մկրտիչ, որդի Առաքելի
Յարութ, որդի Ոսկանի
Նանաճան, հիշված է
Նավի, հայր Կիրակոսի
Ոսկան, որդի Աբռահամի
Պալե, որդի Վարդանի
Պէկ, կողակից Կիրակոսի
Վարդան, որդի Աղամիրի
Վարդան, հայր Պալեի
Վարդան, տեր, հայր տեր Կիրակոս գրչի
Վարդխաթուն, մայր Գրիգորի, կողակից, Ախիճանի
Սարգիս, որդի Սօկուլի
Սօկուլ, հայր Սարգսի
Փանոս, հայր Դօթի, ամուսին Իղիսաբեթի
Օ(աւ)ետիս, եղբայր Կիրակոսի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիմագրության բաժնի կողմից	5
Մուտք	6
«Մեծ վանք» հուշարձանը	8
«Մեծ վանք» եկեղեցու արձանագրությունները	16
Վիմագրագիտական քննություն	28
Ամփոփում	43
Резюме	45
Summary	47
Լուսանկարներ	49
Օգտագործված գրականության ցանկ	58
Վիմագրերում հիշված անձնանունների ցանկ	59

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵԾ ՎԱՆՔ

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՉԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էջադրումը և ծնավորումը
Արթուր Հարությունյանի

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru



ISBN 978-9939-886-62-6



9 789939 886626